ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՊՂՆՁԻ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆԻ ԽՏԱՆՅՈՒԹԻ, ՖԵՌՈՄՈԼԻԲԴԵՆԻ, ՄՈԼԻԲԴԵՆԻ՝ ԴԵՊԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՊՂՆՁԻ ԵՎ ՄՈԼԻԲԴԵՆԻ ԽՏԱՆՅՈՒԹԻ, ՖԵՌՈՄՈԼԻԲԴԵՆԻ, ՄՈԼԻԲԴԵՆԻ՝ ԴԵՊԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅՏԵՐԻ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ պարբերությունն ու 2.1-ին հոդվածը և համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» Պայմանագրի 47-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ.

1) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000՝ պղնձի հանքաքարեր և խտահանքեր, 2613՝ մոլիբդենի հանքաքարեր և խտահանքեր, 7202700000՝ ֆեռոմոլիբդեն, 8102՝ մոլիբդեն և դրանից պատրաստված արտադրատեսակներ (բացառությամբ 810297000՝ թափոններ և ջարդոն) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանումը դեպի երրորդ երկրներ իրականացվում է լիցենզիաների հիման վրա:

2) Սույն կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների արտահանման նպատակով տրամադրվում է գլխավոր լիցենզիա, իսկ մինչև 100 կիլոգրամ արտահանելու դեպքում՝ մեկանգամյա լիցենզիա:

3) Սույն կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների արտահանման նպատակով գլխավոր լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մեկ տոննայի համար:

2. Լիցենզիաների տրամադրման համար լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը:
3. Սահմանել՝

1) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000, 2613, 7202700000, 8102 (բացառությամբ 810297000) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանման լիցենզավորման ընթացակարգը և հայտերի ու լիցենզիաների ձևերը՝ համաձայն Հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը և գործում է վեց ամիս ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության_____ թվականի
__ _____-ի N -Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000, 2613, 7202700000, 8102 (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ 810297000) ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻ ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԴԵՊԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
2. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000, 2613, 7202700000, 8102 (բացառությամբ 810297000) ծածկագրերին դասվող ապրանքների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման լիցենզավորման ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ) կարգավորվում են սույն կետում նշված ապրանքների արտահանման լիցենզավորման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2. Սույն ընթացակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) գլխավոր (հիմնական) լիցենզիա՝ լիցենզիա, որը տալիս է արտաքին առևտրային գործունեության մասնակցին իրավունք, լիցենզավորման ենթակա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000՝ պղնձի հանքաքարեր և խտահանքեր, 2613՝ մոլիբդենի հանքաքարեր և խտահանքեր, 7202700000՝ ֆեռոմոլիբդեն, 8102՝ մոլիբդեն և դրանից պատրաստված արտադրատեսակներ (բացառությամբ 810297000՝ թափոններ և ջարդոն) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքներ դեպի երրորդ երկրներ արտահանման համար՝ լիցենզիայով նախատեսված քանակով.

2) *«մեկագամյա լիցենզիա» («միանգամյա լիցենզիա»)*՝ լիցենզիա, որը տրամադրվում է արտաքին առևտրային գործունեության մասնակցին արտաքին առևտրային այնպիսի գործարքի հիման վրա, որի առարկան լիցենզավորման ենթակա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000, 2613, 7202700000, 8102 (բացառությամբ 810297000) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքներն են և որը տվյալ ապրանքների մինչև 100 կիլոգրամ քանակության արտահանման իրավունք է տալիս.

3) *ապրանք*՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000, 2613, 7202700000, 8102 (բացառությամբ 810297000) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքներ.

4) *արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներ*՝ Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր.

5) *հայտատու*՝ արտաքին տնտեսական գործունեության մասնակից կամ սույն որոշմամբ սահմանված դեպքերում՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը լիազոր մարմին է ներկայացնում փաստաթղթեր՝ լիցենզիաների ձևակերպման նպատակով:

III. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3. Գլխավոր կամ մեկանգամյա լիցենզիա ստանալու համար հայտատուն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին) է ներկայացնում ուղեկցող գրություն՝ նշելով իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը, պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը, ՀՎՀՀ-ն, էլ.փոստի հասցեն և հեռախոսահամարը, ինչպես նաև՝

1) գլխավոր լիցենզիայի համար հայտ՝ համաձայն N 1 ձևի և պայմանագրի պատճենը,

2) մեկանգամյա լիցենզիայի համար հայտ՝ համաձայն N 3 ձևի, հաշիվ-ապրանքագրի պատճենը և լաբորատոր փորձարկումներ կատարելու համար պայմանագրի կամ համաձայնագրի պատճենը,

3) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագրի վերաբերյալ տեղեկատվություն:

4. Գլխավոր կամ մեկանգամյա լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը Լիազոր մարմին հայտատուի հայեցողությամբ կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցեն՝ secretariat@mineconomy.am), ինչպես նաև՝ փոստով կամ առձեռն:

Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում դիմումը և հայտը անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

5. Հայտատուի կողմից, սույն ընթացակարգով սահմանված պահանջներին համապատասխան, անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու դեպքում Լիազոր մարմնի կողմից հայտի մուտքագրման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում բավարարվում կամ մերժվում է լիցենզիայի տրամադրումը: Սույն ընթացակարգի 1-ին կետում նշված յուրաքանչյուր անվանում ապրանքի համար տրամադրվում է առանձին լիցենզիա։
6. Գլխավոր լիցենզիան (համաձայն N 2 ձևի) տրամադրվում է յուրաքանչյուր մեկ տոննայի համար: Սակայն մեկ լիցենզիա կարող է տրամադրվել մեկ տոննայից ավելի քանակի համար, եթե յուրաքանչյուր տոննայի համար վճարվել է օրենքով սահմանված պետական տուրք։ Յուրաքանչյուր մեկ տոննայից պակաս, բացառությամբ սույն ընթացակարգի 7-րդ կետով նախատեսված դեպքերի, արտահանվող ապրանքների համար տրամադրվում է մեկ տոննայի համար նախատեսված գլխավոր լիցենզիա։
7. Յուրաքանչյուր մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում տրամադրվում է մեկանգամյա լիցենզիա (համաձայն N 4 ձևի) նշելով արտահանվող այն ապրանքի քանակը, որի համար վճարվել է պետական տուրք օրենքով սահմանված չափով։
8. Սույն ընթացակարգի 1-ին կետում նշված ապրանքների մինչև հարյուր կիլոգրամ արտահանելու դեպքում գործում է «Պետական տուրքի մասին» օրենքի 19.6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափը։
9. Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը Լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո, թերի լինելու դեպքում, 1 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տեղեկացվում է հայտատուին:
10. Հայտատուն հայտը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը թերի լինելու մասին տեղեկացում ստանալու դեպքում մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք: Տվյալ դեպքում սույն ընթացակարգի 5-րդ կետով նախատեսված ժամկետը երկարաձգվում է ևս մինչև 2 աշխատանքային օրով։
11. Գլխավոր կամ մեկանգամյա լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը թերի են, և 2 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ դրան կից փաստաթղթերում առկա թերությունները կամ չի ներկայացնում համալրված փաստաթղթերը:
12. Գլխավոր կամ մեկանգամյա լիցենզիայի գործողության ժամկետի ավարտ է համարվում սույն որոշման 4-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը:
13. Այն դեպքում, երբ որպես իրավաբանական անձ գրանցված լիցենզավորված անձի հիմնադիր փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ (անվանման կամ գտնվելու վայրի փոփոխություն), կամ փոխվել են անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ լիցենզավորված անձի անձնագրային տվյալները, լիցենզավորված անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմում է Լիազոր մարմին՝ կցելով

նաև նշված փոփոխությունները հավաստող փաստաթղթերը, տրամադրված լիցենզիայում փոփոխություն կատարելու նպատակով։

14. Լիցենզիայի կորստի դեպքում Լիազորված մարմինը, հայտատուի գրավոր դիմումի հիման վրա տրամադրում է լիցենզիայի կրկնօրինակը, որը պարունակում է «Կրկնօրինակ» գրառումը։ Դիմումը, որով պարզաբանվում են լիցենզիայի կորստի պատճառները և հանգամանքները, շարադրվում է ազատ ձևով։
15. Լիցենզիայի կրկնօրինակը Լիազոր մարմնի կողմից տրամադրվում է դիմումը Լիազոր մարմնում մուտքագրելու օրվանից հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում։ Կրկնօրինակի տրամադրման համար պետական տուրք չի գանձվում։

_

Ձև N 1

Հ Ա Յ Տ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000, 2613, 7202700000, 8102 (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ 810297000) ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻ ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԴԵՊԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայտ N
2. Գործողության ժամկետը
3. Գլխավոր լիցենզիայի տեսակը | արտահանում
4. Հայտատուն |
5. Ծագման երկիրը |
6. Չափի միավորը՝ տոննա (անհրաժեշտության դեպքում նշել տարատեսակը՝ թաց մետրիկ, չոր)
7. Քանակը՝ _____ _____

(քանակը տառերով)

8. Ապրանքի ծածկագիրը և նկարագրությունը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի

9. Լրացուցիչ տեղեկատվություն (անհրաժեշտության դեպքում)

10. Գլխավոր լիցենզիա տալու հիմքը

11. Հայտատուի լիազորված անձ
Անունը, հայրանունը, ազգանունը
Պաշտոնը՝
Հեռախոսահամարը՝
Ստորագրությունը
_____ _____ 202 թ.

Ձև N 2

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
1. Գլխավոր լիցենզիա N

3. Գլխավոր լիցենզիայի տեսակը | արտահանում

5. Ծագման երկիրը |
6. Չափի միավորը՝

7. Քան

_____

(քանա

8. Ապրանքի ծածկագիրը և
նկարագրությունը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-
ի
9. Լրացուցիչ տեղեկատվություն
10. Գլխավոր լիցենզիան տալու հիմքը

11. Լիա
Անունը
Պաշտո
Ստորա
_____ _

Ձև N 3

Հ Ա Յ Տ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2603000000, 2613, 7202700000, 8102 (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ 810297000) ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔԻ ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԴԵՊԻ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐ (ՄԻՆՉԵՎ ՀԱՐՅՈՒՐ ԿԻԼՈԳՐԱՄ) ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայտ N
2. Գործողության ժամկետը
3. Մեկանգամյա լիցենզիայի տեսակը | արտահանում
4. Հայտատուն |

5. Ծագման երկիրը |
6. Չափի միավորը՝ կիլոգրամ (անհրաժեշտության դեպքում նշել տարատեսակը՝ թաց մետրիկ, չոր)
7. Քանակը՝ _____
_____

(քանակը տառերով)
8. Ապրանքի ծածկագիրը և նկարագրությունը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրի

9. Լրացուցիչ տեղեկատվություն (անհրաժեշտության դեպքում)

10. Մեկանգամյա լիցենզիա տալու հիմքը
11. Հայտատուի լիազորված անձ
Անունը, հայրանունը, ազգանունը
Պաշտոնը՝
Հեռախոսահամարը՝
Ստորագրությունը
_____ _____ 202 թ.

<u>ՁԵՎ N 4</u>

Մ Ե Կ Ա Ն Գ Ա Մ Յ Ա Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
1. Մեկանգամյա լիցենզիա N

3. Մեկանգամյա լիցենզիայի տեսակը | արտահանում

5. Ծագման երկիրը |
6. Չափի միավորը՝ կիլոգրամ
7. Քան

_____

(քանակ

8. Ապրանքի ծածկագիրը և
նկարագրությունը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-
ի
9. Լրացուցիչ տեղեկատվություն
10. Մեկանգամյա լիցենզիան տալու հիմքը

11. Լիա
Անունը
Պաշտո
Ստորա
_____ _